# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՄՊԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ 2024 թվականի N___ Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՄՊԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի թիվ 884-Լ որոշման 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է՝

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության, «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության միջև կնքված համապատասխանաբար 11.08.2023թ. թիվ ՀԳԴ-ՀՄԱԾՁԲ-23/1-1 և 11.08.2023թ. թիվ ՀԳԴ-ՀՄԱԾՁԲ-23/1-2 ծառայությունների ձեռքբերման պայմանագրերով հասանելի ամպային տիրույթն իր լիազորությունների շրջանակում կարող է օգտագործել նաև Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն:
2. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին՝ աջակցել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը՝ ըստ անհրաժեշտության մեկամսյա ժամկետում «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական և «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությունների հետ քննարկելու համապատասխան պայմանագրերում սույն որոշումից բխող փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու հարցում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան